ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Նախագծի ընդունման անհրաժեշտությունը.

Նախագծի մշակման համար հիմք են հանդիսացել՝ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետը, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» և «Թափոնների մասին» օրենքների դրույթները, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 25-Ն հրամանը:

«Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 2021 թվականի սեպտեմբերի 24-ի ՀՕ-328-Ն օրենքի համաձայն՝ Աբովյան քաղաքի և հարակից 10 գյուղերի միավորման արդյունքում ձևավորվել է Աբովյան համայնքը: Աբովյան համայնքի կազմում ընդգրկված են Աբովյան քաղաքը և Առինջ, Արամուս, Բալահովիտ, Գեղաշեն, Գետարգել, Կամարիս, Մայակովսկի, Կաթնաղբյուր, Պտղնի, Վերին Պտղնի բնակավայրերը: Համայնքի կենտրոնը Աբովյան քաղաքն է: Խոշորացումից հետո հրամայական դարձավ բոլոր բնակավայրերի աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների պատշաճ կազմակերպումն ու իրականացումը և համապատասխան իրավական ակտի ընդունումը:

2. Կարգավորման նպատակը և ակնկալվող արդյունքը.

Նախագծի նպատակն է՝ կարգավորել Աբովյան համայնքի տարածքում աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման հետ կապված հարաբերությունները, դրանով իսկ՝

1) մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա աղբի բացասական (վտանգավոր) ներգործության նվազեցումը և չեզոքացումը.

2) բնակության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմանների ապահովումը.

3) տարածքների աղտոտման, աղբակույտերի առաջացման անթույլատրելիությունը և տարածքների մաքրումը աղբից.

4) օգտահանման ենթակա թափոնների տեսակավորման, օգտագործման ու վերամշակման համար պայմանների ստեղծումը և աղբավայրերում տեղադրվող թափոնների ծավալների նվազեցումը.

5) աղբահանության և սանիտարական մաքրման վերաբերյալ տեղեկատվության մատչելիության և հանրային իրազեկվածության ապահովումը.

6) աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների մեքենայացումը:

3. Նախագծի ընդունման դեպքում այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

Նախագծի ընդունմամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:

4. Նախագծի ընդունման դեպքում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումների կամ նվազեցումների մասին.

Նախագծի ընդունման կապակցությամբ Աբովյան համայնքի բյուջեում եկամուտների ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԲԱԲԱՅԱՆ